

Մ. Աբրահամյան
Ս. Աբրահամյան
Ս. Աբրահամյան
19 մայիսի 2011թ. 11
22.05



Ս. Աբրահամյան
16.05.11

ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ք Ր Ր Ո Շ ՈՒ Մ

N 293-Ձ

ք.Ստեփանակերտ

ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՄԱՂԿՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԱՆԿՁԱՐ ՏԵՂԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաքաղի Հանրապետությանը տրամադրվող՝ Հայաստանի Հանրապետության պետական բուհերում նպատակային անվճար տեղերի արդյունավետ օգտագործման անհրաժեշտությամբ պայմանավորված, ի նպաստ Լեռնային Ղարաքաղի Հանրապետության պետական և մասնավոր հատվածում բարձրորակ մասնագետների պատրաստմանը և հիմք ընդունելով «Իրավական ակտերի» մասին Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել աշխատանքի անցնելու պարտավորությամբ Հայաստանի Հանրապետության բուհերում Լեռնային Ղարաքաղի Հանրապետության նպատակային անվճար տեղերի շրջանակներում առկա ուսումնառության մասին պայմանագրի օրինակելի ձևերը՝ համաձայն NN 1, 2, 3, 4 հավելվածների:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության պետական բուհերի նպատակային անվճար տեղերի համար Լեռնային Ղարաքաղի Հանրապետության նախարարությունները, բացառությամբ առողջապահության նախարարության, կարող են մաև հայտ ներկայացնել և չլնքել սույն որոշմամբ հաստատված (Ձև1) պայմանագիրը, եթե Լեռնային Ղարաքաղի Հանրապետության համապատասխան նախարարության կողմից կարգավորող ոլորտում, Լեռնային Ղարաքաղի Հանրապետության տարածքում գործունեություն ծավալող մասնավոր կազմակերպության և համապատասխան նախարարության միջև առկա է գրավոր համաձայնությունը՝ դիմորդին՝ բուհի բակալավորիատն ավարտելուց հետո մասնավոր կազմակերպության կողմից մասնագիտական աշխատանքով ապահովելու մասին, որի մեկ օրինակը տրվում է համաձայնագրի կողմ հանդիսացող Հայաստանի Հանրապետության պետական բուհերի համապատասխան նպատակային անվճար տեղ(եր) ընդունված ուսանողին (ներին):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2012 թվականի հունվարի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա:

ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ



Ս. Աբրահամյան

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

23 մայիսի

Օրինակելի

Ձև 1

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Աշխատանքի անցնելու պարտավորությամբ ՀՀ բուհերում ԼՂՀ նպատակային անվճար տեղերի շրջանակներում բակալավրիատում առկա ուսումնառության մասին
թ. _____ « _____ » _____ 201 թ.

_____, այսուհետ՝
(գերատեսչության անվանումը)

«Պատվիրատու»,
ի դեմս _____, մի կողմից,
(պաշտոնը, անուն, հայրանուն, ազգանուն)

և

(բուհի անվանումը, մասնագիտության անվանումը)

Նպատակային անվճար տեղի ուսանող՝

(անուն, հայրանուն, ազգանուն)

(բնակության վայրը, անձնագրի սերիան, համարը)
այսուհետ՝ «Ուսանող-շրջանավարտ» (ի դեմս իր
ծնողը (ներ), խնամակալը (ներ),
հայր(խնամակալ)

(անուն, հայրանուն, ազգանուն, անձնագրի սերիան, համարը)
մայր(խնամակալ) _____),
(անուն, հայրանուն, ազգանուն, անձնագրի սերիան, համարը)

մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Համաձայն սույն պայմանագրի՝ Ուսանող-շրջանավարտը պարտավորվում է ուսումնառել սույն պայմանագրով նշված ուսումնական հաստատությունում և համապատասխան մասնագիտությամբ ստանալ բակալավրի աստիճան, որից հետո անցնել աշխատանքի Պատվիրատուի մոտ, իսկ Պատվիրատուն Ուսանող-շրջանավարտին պարտավոր է ապահովել մասնագիտական աշխատանքով ԼՂՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրի կետերով սահմանված կարգով և պայմաններով:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Ուսանող-շրջանավարտը պարտավոր է՝

1) կատարել բուհի ներքին աշխատակարգի և տվյալ մասնագիտության ուսումնառության հետ առնչվող պահանջները,

Վ-391
11

2) Պատվիրատուի կողմից Ուսանող-շրջանավարտի՝ ԼԴՅ-ում գրանցված վայրում, բուհն ավարտելու ամսից 6(վեց) ամսվա ընթացքում մասնագիտական աշխատանքով ապահովելու դեպքում 3 (երեք) տարի ժամկետով կնքել աշխատանքային պայմանագիր,

3) չկնքել ուսումնառության մասին որևէ այլ պայմանագիր ԼԴՅ կամ այլ պետության պետական կամ մասնավոր կազմակերպությունների հետ՝ մինչև կողմերի փոխհամաձայնությամբ սույն պայմանագրի լուծումը,

4) սույն պայմանագրի 2-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջները խախտելու դեպքում 6 (վեց) ամսվա ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե փոխհատուցել պետության կողմից Ուսանող-շրջանավարտի համար ծախսված գումարը և գերատեսչության կողմից ԼԴՅ օրենսդրությամբ սահմանված բացթողնված օգուտը՝ գումարի տեսքով,

5) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե փոխհատուցել պետության կողմից Ուսանող-շրջանավարտի համար ծախսված գումարը և գերատեսչության կողմից ԼԴՅ օրենսդրությամբ սահմանված բացթողնված օգուտը՝ գումարի տեսքով, սույն պայմանագրով նախատեսված բուհից հեռացնելու կամ սեփական դիմումի համաձայն սույն պայմանագրով նախատեսված բուհից հեռացման դեպքերում,

6) ԼԴՅ օրենսդրությանը համապատասխան Ուսանող-շրջանավարտի անվան, ազգանվան, հայրանվան կամ անձնագրային տվյալների փոփոխման դեպքում 10 օրվա ընթացքում տեղեկացնել Պատվիրատուին:

3. Պատվիրատուն պարտավոր է՝

սույն պայմանագրով նախատեսված ուսումնառության ավարտից և բալլավարի համապատասխան դիպլոմ ստանալուց հետո 1 (մեկ) տարվա ընթացքում Ուսանող-շրջանավարտին առաջարկել մասնագիտական աշխատանք ԼԴՅ օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով՝ 3 (երեք) տարի ժամկետով կնքելով աշխատանքային պայմանագիր:

4. Ուսանող-շրջանավարտն իրավունք ունի՝

1) բուհն ավարտելու ամսից 6(վեց) ամսվա ընթացքում Պատվիրատուի կողմից աշխատանքի առաջարկ չստանալու դեպքում հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց,

2) հրաժարվել աշխատանքային պայմանագրից, եթե Պատվիրատուի կողմից առաջարկված աշխատանքն ակնհայտորեն չի համապատասխանում նրա մասնագիտությանը,

3) բուհն ավարտելուց հետո 1 (մեկ) տարվա ընթացքում Պատվիրատուի կողմից մասնագիտական աշխատանքի առաջարկ չստանալու դեպքում մասնագիտական աշխատանքով ապահովելու պահանջի հայցով դիմել դատարան:

5. Պատվիրատուն իրավունք ունի՝

պահանջել և ստանալ սույն պայմանագրի 2-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փոխհատուցումները:

III. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՆՅՈՒՆԵՐ

6. Սույն պայմանագիրը համարվում է լուծված, եթե՝

1) Պատվիրատու գերատեսչությունը լուծարվում է:

7. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է մինչև Ուսանող-շրջանավարտի կողմից Պատվիրատուի հետ աշխատանքային պայմանագրի ստորագրելը:

8. Բոլոր այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, կարգավորվում են ԼԴՅ օրենսդրությամբ:

9. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել կողմերի գրավոր փոխհամաձայնությամբ կամ դատական կարգով:

10. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը կարգավորվում են ԼԴՅ օրենսդրությամբ սահմանված կարգով:

11. Սույն պայմանագիրը կնքված է 3 (երեք) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ : Պայմանագրի 1 (մեկ) օրինակ տրվում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարությանը :

12. Կողմերի հասցեներն ու վավերապայմանները՝

«Ուսանող-շրջանավարտ»

«Պատվիրատու»

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲՈՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ



Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Օրինակելի՝

Ձև 2

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ուսումնական հաստատություններում ԼՂՀ նպատակային անվճար տեղերի շրջանակներում բակալավորիատում առկա ուսումնառության մասին

Բ. _____ « _____ » _____ 2011 թ.
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունը,
այսուհետ՝
«Պատվիրատու»,
ի դեմս _____, մի կողմից,
(պաշտոնը, անուն, հայրանուն, ազգանուն)
և

_____ (ուսումնական հաստատության անվանումը, մասնագիտության անվանումը)

նպատակային անվճար տեղի ուսանող՝

_____ (անուն, հայրանուն, ազգանուն)

_____ (քննության վայրը, անձնագրի սերիան, համարը)
այսուհետ՝ «Ուսանող-շրջանավարտ» (ի դեմս իր
ծնողը (ներ), խնամակալը (ներ),
հայր(խնամակալ) _____

_____ (անուն, հայրանուն, ազգանուն, անձնագրի սերիան, համարը)

մայր(խնամակալ) _____),
_____ (անուն, հայրանուն, ազգանուն, անձնագրի սերիան, համարը)

մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Համաձայն սույն պայմանագրի՝ Ուսանող-շրջանավարտը պարտավորվում է ուսումնառել սույն պայմանագրով նշված ուսումնական հաստատությունում և համապատասխան մասնագիտությամբ ստանալ բակալավորի աստիճան, որից հետո Պատվիրատուի հետ կնքել ուսումը շարունակելու մասին սույն որոշմամբ հաստատված Ձև 3 պայմանագիրը, իսկ Պատվիրատուն պարտավոր է կնքել սույն որոշմամբ հաստատված Ձև 3 պայմանագիրը Ուսանող-շրջանավարտի հետ, Ուսանող-շրջանավարտի կողմից սույն պայմանագրի կետերը կատարելու դեպքում:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Ուսանող-շրջանավարտը պարտավոր է՝

- 1) կատարել ուսումնական հաստատության ներքին աշխատակարգի և տվյալ մասնագիտության ուսումնառության հետ առնչվող պահանջները,
- 2) չկնքել ուսումնառության մասին որևէ այլ պայմանագիր ԼՂՀ կամ այլ պետության պետական կամ մասնավոր կազմակերպությունների հետ՝ մինչև կողմերի

3) սույն պայմանագրի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջները խախտելու դեպքում 6 (վեց) ամսվա ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե փոխհատուցել պետության կողմից Ուսանող-շրջանավարտի համար ծախսված գումարը և գերատեսչության կողմից ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված բացթողնված օգուտը՝ գումարի տեսքով,

4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե փոխհատուցել պետության կողմից Ուսանող-շրջանավարտի համար ծախսված գումարը և գերատեսչության կողմից ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված բացթողնված օգուտը՝ գումարի տեսքով, սույն պայմանագրով նախատեսված ուսումնական հաստատությունից հեռացնելու կամ սեփական դիմումի համաձայն սույն պայմանագրով նախատեսված ուսումնական հաստատությունից հեռացման դեպքերում,

5) ԼՂՀ օրենսդրությանը համապատասխան Ուսանող-շրջանավարտի անվան, ազգանվան, հայրանվան կամ անձնագրային տվյալների փոփոխման դեպքում 10 օրվա ընթացքում տեղեկացնել Պատվիրատուին:

3. Պատվիրատուն պարտավոր է՝

սույն պայմանագրով նախատեսված Ուսանող-շրջանավարտի կողմից ուսումնառության ավարտից և բակալավրի համապատասխան դիպլոմ ստանալուց հետո կնքել ուսումնառության մասին սույն որոշմամբ հաստատված Ձև 3 պայմանագիրը :

4. Ուսանող-շրջանավարտն իրավունք ունի՝

սույն պայմանագրով նախատեսված ուսումնական հաստատությունն ավարտելուց և բակալավրի աստիճան ստանալուց հետո պահանջի հայցով դիմել դատարան, եթե Պատվիրատուն հրաժարվում է կնքել սույն որոշմամբ հաստատված Ձև 3 պայմանագիրը:

5. Պատվիրատուն իրավունք ունի՝

պահանջել և ստանալ սույն պայմանագրի 2-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փոխհատուցումները:

III. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6. Սույն պայմանագիրը համարվում է լուծված, եթե՝

1) Պատվիրատու գերատեսչությունը լուծարվում է :

7. Ուսանող-շրջանավարտի և ԼՂՀ գերատեսչության միջև Ուսանող-շրջանավարտի՝ հետագա ուսումը շարունակելու մասին մեծաթիմակ պայմանագիր կնքվելու դեպքում, սույն պայմանագրով հաստատված Ուսանող-շրջանավարտի փոխհատուցման դեպքերը գումարվում են Ուսանող-շրջանավարտի՝ հետագա ուսումը շարունակելու մասին մեծաթիմակ պայմանագրով սահմանված փոխհատուցումներին:

8. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է մինչև Ուսանող-շրջանավարտի ուսումնառության ավարտը:

9. Բոլոր այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, կարգավորվում են ԼՂՀ օրենսդրությամբ:

10. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել կողմերի գրավոր փոխհամաձայնությամբ կամ դատական կարգով:

11. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը կարգավորվում են ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:


12. Սույն պայմանագիրը կնքված է 3 (երեք) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ : Պայմանագրի 1 (մեկ) օրինակ տրվում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարությանը :

13. Կողմերի հասցեներն ու վավերապայմանները՝

«Ուսանող-շրջանավարտ»

«Պատվիրատու»

ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԴԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ



Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Օրինակելի

Ձև 3

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ուսումնական հաստատություններում ԼՂՀ նպատակային անվճար տեղերի
շրջանակներում մագիստրատուրայում առկա ուսումնառության մասին

թ. _____ « _____ » _____ 201 թ.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունը,
այսուհետ՝

«Պատվիրատու»,

ի դեմս _____, մի կողմից,

(պաշտոնը, անուն, հայրանուն, ազգանուն)

և

_____ (ուսումնական հաստատության անվանումը, մասնագիտության անվանումը)

նպատակային անվճար տեղի ուսանող՝

_____ (անուն, հայրանուն, ազգանուն)

_____ (բնակության վայրը, անձնագրի սերիան, համարը)
այսուհետ՝ «Ուսանող-շրջանավարտ» (ի դեմս իր
ծնողը (ներ), խնամակալը (ներ),
հայր(խնամակալ) _____

(անուն, հայրանուն, ազգանուն, անձնագրի սերիան, համարը)

մայր(խնամակալ) _____),

(անուն, հայրանուն, ազգանուն, անձնագրի սերիան, համարը)

մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌՐԿԱՆ

1. Համաձայն սույն պայմանագրի՝ Ուսանող-շրջանավարտը պարտավորվում է ուսումնառել սույն պայմանագրով նշված ուսումնական հաստատությունում և համապատասխան մասնագիտությամբ ստանալ մագիստրոսի նստիճան, որից հետո Պատվիրատուի հետ կնքել ուսումը շարունակելու մասին սույն որոշմամբ հաստատված Ձև 4 պայմանագիրը, իսկ Պատվիրատուն պարտավոր է կնքել սույն որոշմամբ հաստատված Ձև 4 պայմանագիրը Ուսանող-շրջանավարտի հետ, Ուսանող-շրջանավարտի կողմից սույն պայմանագրի կետերը կատարելու դեպքում:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Ուսանող-շրջանավարտը պարտավոր է՝

1) կատարել ուսումնական հաստատության ներքին աշխատակարգի և տվյալ մասնագիտության ուսումնառության հետ առնչվող պահանջները,

2) չկնքել ուսումնառության մասին որևէ այլ պայմանագիր ԼՂՀ կամ այլ պետության պետական կամ մասնավոր կազմակերպությունների հետ՝ մինչև կողմերի փոխհամաձայնությամբ սույն պայմանագրի լուծումը,

3) սույն պայմանագրի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջները խախտելու դեպքում 6 (վեց) ամսվա ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

պետական բյուջե փոխհատուցել պետության կողմից Ուսանող-շրջանավարտի համար ծախսված գումարը և գերատեսչության կողմից ԼԴՅ օրենսդրությամբ սահմանված բացթողնված օգուտը՝ գումարի տեսքով, սույն պատվիրատուի հետ բակալավրիատի մասին պայմանագիր կնքած լինելու դեպքում՝ նաև բակալավրիատի համար Ուսանող-շրջանավարտի համար ծախսված գումարը և գերատեսչության կողմից ԼԴՅ օրենսդրությամբ սահմանված բացթողնված օգուտը՝ գումարի տեսքով:

4) Լեռնային Ղարաբաղի Յանրապետության պետական բյուջե փոխհատուցել պետության կողմից Ուսանող-շրջանավարտի համար ծախսված գումարը և գերատեսչության կողմից ԼԴՅ օրենսդրությամբ սահմանված բացթողնված օգուտը՝ գումարի տեսքով, սույն պայմանագրով նախատեսված ուսումնական հաստատությունից հեռացնելու կամ սեփական դիմումի համաձայն սույն պայմանագրով նախատեսված ուսումնական հաստատությունից հեռացման դեպքերում, սույն պատվիրատուի հետ նմանատիպ բակալավրիատի մասին պայմանագիր կնքած լինելու դեպքում, նաև բակալավրիատի համար Ուսանող-շրջանավարտի համար ծախսված գումարը և գերատեսչության կողմից ԼԴՅ օրենսդրությամբ սահմանված բացթողնված օգուտը՝ գումարի տեսքով:

5) ԼԴՅ օրենսդրությամբ համապատասխան Ուսանող-շրջանավարտի անվան, ազգանվան, հայրանվան կամ անձնագրային տվյալների փոփոխման դեպքում 10 օրվա ընթացքում տեղեկացնել Պատվիրատուին:

3. Պատվիրատուն պարտավոր է՝
սույն պայմանագրով նախատեսված Ուսանող-շրջանավարտի կողմից ուսումնառության ավարտից և մագիստրատուրայի համապատասխան դիպլոմ ստանալուց հետո կնքել ուսումնառության մասին սույն որոշմամբ հաստատված Ձև 4 պայմանագիրը:

4. Ուսանող-շրջանավարտն իրավունք ունի՝
սույն պայմանագրով նախատեսված ուսումնական հաստատությունն ավարտելուց և մագիստրոսի աստիճան ստանալուց հետո պահանջի հայցով դիմել դատարան, եթե Պատվիրատուն հրաժարվում է կնքել սույն որոշմամբ հաստատված Ձև 4 պայմանագիրը:

5. Պատվիրատուն իրավունք ունի՝
պահանջել և ստանալ սույն պայմանագրի 2-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փոխհատուցումները:

III. ԵԶՐԱՓՈՎԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6. Սույն պայմանագրով նախատեսված մասնագիտությունը սահմանվում է Պատվիրատուի կողմից:

7. Սույն պայմանագիրը համարվում է լուծված, եթե՝

1) Պատվիրատու գերատեսչությունը լուծարվում է:

8. Ուսանող-շրջանավարտի և ԼԴՅ գերատեսչության միջև Ուսանող-շրջանավարտի՝ հետագա ուսումը շարունակելու մասին նմանօրինակ պայմանագիր կնքվելու դեպքում, սույն պայմանագրով հաստատված Ուսանող շրջանավարտի փոխհատուցման դեպքերը զուեմարվում են Ուսանող-շրջանավարտի՝ հետագա ուսումը շարունակելու մասին նմանօրինակ պայմանագրով սահմանված փոխհատուցումներին:

9. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է մինչև Ուսանող-շրջանավարտի ուսումնառության ավարտը:

10. Բոլոր այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, կարգավորվում են ԼԴՅ օրենսդրությամբ:

11. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել կողմերի գրավոր փոխհամաձայնությամբ կամ դատական կարգով:

12. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը կարգավորվում են ԼԴՅ օրենսդրությամբ սահմանված կարգով:

13. Սույն պայմանագիրը կնքված է 3 (երեք) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի 1 (մեկ) օրինակ տրվում է ԼԴՅ կրթության և գիտության նախարարությանը:

14. Կողմերի հասցեներն ու վավերապայմանները՝

«Ուսանող-շրջանավարտ»

«Պատվիրատու»

ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ԳԱՆՐԱԴԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ



Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Օրինակելի

Ձև 4

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ուսումնական հաստատություններում ԼՂՀ նպատակային անվճար տեղերի շրջանակներում կլինիկական օրդինատուրայում առկա ուսումնառության մասին ք. _____ « _____ » 201 թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս _____, մի կողմից, (պաշտոնը, անուն, հայրանուն, ազգանուն) և

_____ (ուսումնական հաստատության անվանումը, մասնագիտության անվանումը)

նպատակային անվճար տեղի ուսանող՝

_____ (անուն, հայրանուն, ազգանուն)

_____ (քննության վայրը, անձնագրի սերիան, համարը)

այսուհետ՝ «Ուսանող-շրջանավարտ» (ի դեմս իր ծնողը (ներ), խնամակալը(ներ), հայր(խնամակալ)

_____ (անուն, հայրանուն, ազգանուն, անձնագրի սերիան, համարը)

մայր(խնամակալ)

_____ (անուն, հայրանուն, ազգանուն, անձնագրի սերիան, համարը)

մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Համաձայն սույն պայմանագրի՝ Ուսանող-շրջանավարտը պարտավորվում է ուսումնառել սույն պայմանագրով նշված ուսումնական հաստատությունում և համապատասխան մասնագիտությամբ ստանալ կլինիկական օրդինատորի աստիճան, որից հետո անցնել աշխատանքի Պատվիրատուի մոտ, իսկ Պատվիրատուն Ուսանող-շրջանավարտին պարտավոր է ապահովել մասնագիտական աշխատանքով ԼՂՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրի կետերով սահմանված կարգով և պայմաններով:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Ուսանող-շրջանավարտը պարտավոր է՝

1) կատարել ուսումնական հաստատության ներքին աշխատակարգի և տվյալ մասնագիտության ուսումնառության հետ առնչվող պահանջները,

2) պատվիրատուի կողմից Ուսանող-շրջանավարտի՝ սույն պայմանագրով նախատեսված ուսումնական հաստատությունն ավարտելու ամսից 3(երեք) ամսվա ընթացքում մասնագիտական աշխատանքով ապահովելու դեպքում 3 (երեք) տարի ժամկետով կնքել աշխատանքային պայմանագիր,

3) չկնքել ուսումնառության մասին որևէ այլ պայմանագիր ԼԴՉ կամ այլ պետության պետական կամ մասնավոր կազմակերպությունների հետ՝ մինչև կողմերի փոխհամաձայնությամբ սույն պայմանագրի լուծումը,

4) սույն պայմանագրի 2-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջները խախտելու դեպքում 6 (վեց) ամսվա ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե փոխհատուցել պետության կողմից Ուսանող-չրջանավարտի համար ծախսված գումարը և գերատեսչության կողմից ԼԴՉ օրենսդրությամբ սահմանված բացթողնված օգուտը՝ գումարի տեսքով, սույն պատվիրատուի հետ նմանատիպ բակալավրիատի, մագիստրատուրայի մասին պայմանագիր կնքած լինելու դեպքում՝ նաև բակալավրիատի, մագիստրատուրայի համար Ուսանող-չրջանավարտի համար ծախսված գումարը և գերատեսչության կողմից ԼԴՉ օրենսդրությամբ սահմանված բացթողնված օգուտը՝ գումարի տեսքով,

5) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե փոխհատուցել պետության կողմից Ուսանող-չրջանավարտի համար ծախսված գումարը և գերատեսչության կողմից ԼԴՉ օրենսդրությամբ սահմանված բացթողնված օգուտը՝ գումարի տեսքով՝ սույն պայմանագրով նախատեսված ուսումնական հաստատությունից հեռացնելու կամ սեփական դիմումի համաձայն սույն պայմանագրով նախատեսված ուսումնական հաստատությունից հեռացման դեպքերում, սույն պատվիրատուի հետ նմանատիպ բակալավրիատի, մագիստրատուրայի մասին պայմանագիր կնքած լինելու դեպքում՝ նաև բակալավրիատի, մագիստրատուրայի համար Ուսանող-չրջանավարտի համար ծախսված գումարը և գերատեսչության կողմից ԼԴՉ օրենսդրությամբ սահմանված բացթողնված օգուտը՝ գումարի տեսքով,

6) ԼԴՉ օրենսդրությանը համապատասխան Ուսանող-չրջանավարտի անվան, ազգանվան, հայրանվան կամ անձնագրային տվյալների փոփոխման դեպքում 10 օրվա ընթացքում տեղեկացնել Պատվիրատուին:

3. Պատվիրատուն պարտավոր է՝

սույն պայմանագրով նախատեսված ուսումնառության ավարտից և կլինիկական օրդինատորի համապատասխան դիպլոմ ստանալուց հետո 6 (վեց) ամսվա ընթացքում Ուսանող-չրջանավարտին առաջարկել մասնագիտական աշխատանք ԼԴՉ օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով՝ 3 (երեք) տարի ժամկետով կնքելով աշխատանքային պայմանագիր:

4. Ուսանող-չրջանավարտն իրավունք ունի՝

1) սույն պայմանագրով նախատեսված ուսումնական հաստատությունը ավարտելու ամսից 6 (վեց) ամսվա ընթացքում Պատվիրատուի կողմից աշխատանքի առաջարկ չստանալու դեպքում հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց,

2) ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո 6 (վեց) ամսվա ընթացքում Պատվիրատուի կողմից մասնագիտական աշխատանքի առաջարկ չստանալու դեպքում մասնագիտական աշխատանքով ապահովելու պահանջի հայցով դիմել դատարան:

5. Պատվիրատուն իրավունք ունի՝

պահանջել և ստանալ սույն պայմանագրի 2-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փոխհատուցումները:

III. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է մինչև Ուսանող-չրջանավարտի կողմից Պատվիրատուի հետ աշխատանքային պայմանագրի ստորագրելը:

7. Բոլոր այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, կարգավորվում են ԼԴՉ օրենսդրությամբ:

8. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել կողմերի գրավոր փոխհամաձայնությամբ կամ դատական կարգով:

9. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը կարգավորվում են ԼԴՉ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. Սույն պայմանագիրը կնքված է 3 (երեք) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ : Պայմանագրի 1(մեկ) օրինակ տրվում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարությանը:
11. Կողմերի հասցեներն ու վավերապայմանները՝

«Ուսանող-շրջանավարտ »

«Պատվիրատու»

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ



Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ